

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՄԻԱՅՅԱԼ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

[www.redistricting2011.lacity.org](http://www.redistricting2011.lacity.org)

200 N. Spring Street, Room 285, Los Angeles, CA 90012

Դիտողությունները կամ քարտեզներն ուղարկել հետևյալ հասցեով՝

**Հաճախ տրվող հարցեր**

➤ **Ի՞նչ է սահմանների վերանայումը և ինչո՞ւ է դա կարևոր:**

Յուրաքանչյուր 10 տարին մեկ Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջանի (LAUSD) սահմանները վերանայվում են՝ հաշվի առնելով բնակչությունում տեղի ունեցած փոփոխությունները: Հանձնաժողովը քաղաքային խորհրդին ներկայացնում է սահմանների վերանայման ծրագրի ընդունման առաջարկություն, որը սահմաններ է նախագծում LAUSD-ի խորհրդի անդամների համար: Այն, թե ինչպես են գծվում սահմանները, կարող է անդրադառնալ համայնքների բնակիչների կողմից նախընտրելի ներկայացուցչին ընտրելու հնարավորության վրա: Շրջանների բնակչությունների թիվը պետք է լինի հնարավորինս հավասար և իրատեսական, որպեսզի համայնքները հավասար չափով օգտվեն քաղաքական ներկայացուցչությունից:

➤ **Ինչո՞ւ է հանձնաժողովը ցանկանում լսել հանրության կարծիքը:**

Չափազանց կարևոր է, որ Դուք բարձրախոսեք Ձեր համայնքի մասին՝ ապահովելու համար, որ շրջանների սահմանները գծվեն այնպես, որ Ձեր համայնքը մնա ամբողջական և նման հետաքրքրություններ ունեցող հարևան համայնքների հետ խմբավորված: Այդ կերպ Դուք նպաստում եք, որ Ձեր ընտրյալ առաջնորդները լսեն Ձեր ձայնն այնպիսի կարևոր որոշումներում, ինչպիսիք են Ձեր երեխայի դպրոցական կրթության որակը կամ այն, թե որքան բարձր են Ձեր հարկերը:

➤ **Ի՞նչ է “ընդհանուր շահերի համայնքը”:**

“Ընդհանուր շահերի համայնքը” (COI) աշխարհագրական կապ ունեցող բնակչություն է, որն ունի ընդհանուր սոցիալական և տնտեսական շահեր: Այդպիսի ընդհանուր շահերի օրինակներ են.

- Որոշակի տարածքներին բնորոշ, օրինակ քաղաքային, գյուղային, արդյունաբերական կամ գյուղատնտեսական, ինչպես նաև աշխարհագրական, օրինակ գետ, բարձունք, ծովափ, ծովից կամ երկրի սահմանից հեռու գտնվող տարածք, ջրբաժանք և այլն:
- Շահեր, որոնք բնորոշ են այնպիսի տարածքների, որտեղ մարդիկ նույն կենսամակարդակն ունեն, օգտվում են նույն փոխադրամիջոցներից, ունեն զբաղվածության նման հնարավորություններ կամ օգտվում են ընտրական գործընթացի համար պատշաճ հաղորդակցման նույն միջոցներից, ինչպես նաև ունեն ընդհանուր նպատակներ:

➤ **Արդյո՞ք հանրությունը կկարողանա տեսնել, թե ինչպես են գծվելու սահմանները:**

Այո, հանձնաժողովի բոլոր ժողովները բաց են հանրության համար և տեսաձայնագրվում են (հնարավորության դեպքում): Արձանագրությունների և տեսաձայնագրությունների պահոցի հետ մեկտեղ դրանք ապահովում են սահմանների վերանայման գործընթացի աննախադեպ թափանցիկություն: Առաջարկվող շրջանների քարտեզների նախագծերը կփակցվեն հանձնաժողովի վեբկայքում՝ փետրվարին:

➤ **Ի՞նչպես են ցուցմունք տալիս և ինչպե՞ս են դիտողություններն օգտագործվելու սահմանները գծելիս:**

Հանձնաժողովի ժողովին յուրաքանչյուրին իր համայնքի մասին 2 րոպե խոսելու հնարավորություն կընձեռվի: Հանրությանը խորհուրդ է տրվում պատասխանել ստորև ներկայացված հարցերին՝ օգնելու հանձնաժողովին հասկանալ յուրաքանչյուր “ընդհանուր շահերի համայնքին”: Երբ հանձնաժողովը սկսի սահմանները գծելու գործընթացը, հրապարակավ ներկայացված դիտողությունները մարդահամարի տվյալների հետ մեկտեղ կօգտագործվեն օգնելու այդ գործընթացում: Հրապարակային ցուցմունքը կօգնի տեղեկություններ ստանալ “ընդհանուր շահերի համայնքների” առանձնահատկությունների մասին՝ դրանց շրջակայքն առավել լավ ճանաչող անձանցից:

Ձեր թաղամասը/փոստային ինդեքսը \_\_\_\_\_

Համայնքը սահմանող փողոցներ/սահմաններ \_\_\_\_\_

Հիմնական աշխարհագրական սահմանները/հատկանիշերը (մայրուղիներ, այգիներ, լճեր, բարձունքներ) \_\_\_\_\_

Ձեր համայնքում գործածվող լեզուները \_\_\_\_\_

Ձեր համայնքում բնակվող հիմնական ցեղային/էթնիկ խմբերը \_\_\_\_\_

Ձեր LAUSD-ի խորհրդի անդամի շրջանի ներկայիս սահմանների հետ կապված Ձեր մտահոգություններն ու դիտողությունները \_\_\_\_\_